371
Ջ-61

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼԺԿ-Ի ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ
ԳԻՏԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հեռակա կոնսուլտացիա սկսնակ ուսուցչին

371
Ջ-61

ОБЯЗАТЕЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

ԵՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՐՐՈՐԴ-ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

371
Ջ-61

БІБЛІОТЕКА
Академії Наук
УРСР

ԼԱՒՍԱՀՐԱՏ

Երևան 1940

19331 45.98t
17 JUL 2013

Ս. ՉԻԶԱԿՅԱՆ

ԵՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՐԲՈՐԴ-ՉՈՐԲՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Դասավանդման մեթոդներից մեկը համարվում է եքսկուրսիան։

Եքսկուրսիայի ընթացքում յերեխաները ծանոթանում են բնությանը՝ կենդանական և բուսական աշխարհի բազմաթիվ ձևերին ու տեսակներին, վոր դպրոցական պայմաններում հնարավոր չէ ուսումնասիրել։ Բնական յերևույթների ամբողջականությունը հնարավոր չէ լրիվ չափով տալ վոչ գրքով, վոչ էլ նկարագրություններով։ Այն պետք է դիտել իր բնական միջավայրում—միասնության մեջ։

Բնագիտական եքսկուրսիաներ պետք է կազմակերպել դեպի խորհրդային տնտեսությունները, կոլեկտիվ տնտեսությունները, սելեկցիոն կայանները, գավառագիտական թանգարանները։ Այդ հնարավորություն կտա աշակերտներին ժամանակից ծանոթանալու սոցիալիստական գյուղատնտեսության նվաճումներին։

Եքսկուրսիաներ կատարելով դեպի այգի, անտառ, պուրակ, բանջարանոց՝ հնարավոր կլինի հիմնական գծերով նկարագրել այն փոփոխությունները, վորոնք աշնան, ձմռան, գարնան ընթացքում կատարվում են բնության մեջ՝ թռչունների, կենդանիների կյանքում, բուսական աշխարհում, կլիմայի մեջ և այլն։ Եքսկուրսիաների միջոցով պետք է ուսումնասիրել մի շարք ջրային կենդանիներ և բույսեր, ծանոթ լինել նրանց կազմությանը և ջրային կյանքին հարմարվելուն։

Եքսկուրսիաների ընթացքում աշակերտները պետք է հավաքեն ու կազմեն կոլեկցիաներ, հերբարիումներ, (տերևների, սերմերի, միջատների, ծառերի ճյուղերի կտրվածքների և այլն)։ Դեպի արտադրություն (հանածոների մշակման վայրը) կատարած եքսկուրսիաների ընթացքում պետք է հավաքեն հողի, ապառների, գրանիտի, կավի, ավազի, կրաքարի, կրի, կավճի, ցեմենտի, վառելանյութերի և մետաղների կոլեկցիաներ։

Աշակերտներն եքսկուրսիաների միջոցով պետք է ծանոթանան մակերևույթային և ստորերկրյա ջրերին, ջրի շրջանառությանը բնության մեջ, ջրի քայքայիչ դերին և նրա դեմ պայքարելու միջոցներին, ջրի ուժի ոգտագործմանը մարդու կողմից և այլն։

Տարրական դպրոցում եքսկուրսիաների տևողությունը մեկ ժամից ավել չպետք է լինի, յերկարատև եքսկուրսիան աշակերտների մեջ ձանձրույթ կառաջացնի. և իր նպատակին չի հասնի։

Եքսկուրսիաները կարող են լինել յերեք տեսակ.

1. Եքսկուրսիա դեպի բնություն.
2. Եքսկուրսիա դեպի արտադրություն.
3. Եքսկուրսիա դեպի թանգարան, ցուցահանդես։

1. Բնության մեջ կատարվող եքսկուրսիաներով կարելի յե աշակերտներին ծանոթացնել բույսերին և կենդանիներին իրենց բնական միջավայրում։ Աշակերտները կտեսնեն, թե տվյալ բույսը կամ կենդանին ինչ պայմաններում և ապրում, ինչ փոխհարաբերության մեջ է շրջապատի բնության հետ։ Այսպես, որինակ՝ ձկան կազմությանը ծանոթանալը կարելի յե դասարանական պայմաններում, բայց ապրելակերպը պետք է դիտել միայն բնական պայմաններում—ջրում։ Կամ մի այլ որինակ. ուսումնասիրվում է սերմի կազմությունը, այդ պետք է դիտել դասարանում, իսկ տեսնել, թե ինչպես սերմերը տարածվում են դաշտում, կարելի յե միայն եքսկուրսիաների միջոցով։

Կրաքարի կտորը և նրա բոլոր հատկություններն ուսումնասիրվում են լաբորատոր պայմաններում, բայց ավելի հիմնական հասկացողություն կրաքարի մասին վերցրեք լեռնային տեսակի, յերեխաները լավ են ըմբռնում, յերբ եքսկուրսիաների ժամանակ դիտում են կրաքարի շերտերը։

Այս որինակները ցույց են տալիս, թե ինչպիսի խոշոր նշանակություն ունի եքսկուրսիան դեպի բնությունը։ Սակայն չպետք է եքսկուրսիան վերածել բացոթյա դասի և դրսում ուսումնասիրել այն որյեկտները, վորը դասարանում ավելի լավ և հիմնավոր կարելի յե անցնել։

Մեծ կրթական նշանակություն ունի եքսկուրսիաները դեպի արտադրությունը—գյուղատնտեսական հիմնարկները, խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների դաշտերը, բանջարանոցները։ Այդտեղ աշակերտները ծանոթանում են խոշոր ձեռնարկումներին և պատկերացում են ունենում, թե ինչպես մարդը գիտության ոգնությամբ վերափոխում է բուսական և կենդանա-

7033-53

1 MAR 2010

կան աշխարհը։ Նման դիտողություններ հնարավոր չե տանել դասարանական պայմաններում։

Եքսկուրսիան վարելիս ուսուցիչը պետք ե խուսափի հետևյալ թերություններից՝

1. Եքսկուրսիան չպետք ե վերածել բացոթյա դասախոսության, պատմելով այնպիսի բաների մասին, որոնք չկան շրջապատում կամ իրենց պլանում։ Այլապես անուշադրության են մատնվում այն օբյեկտները, որոնց համար կազմակերպվել ե եքսկուրսիան։ Ուսուցչի պատմածը պետք ե լինի կարճ և կապված եքսկուրսիայի օբյեկտի հետ։

2. Ուսուցիչը չպետք ե բավարարվի առարկան ցույց տալով և նրա մասին պատմելով, այլ անհրաժեշտ ե աշակերտներին զբույցին մասնակից դարձնել և հանձնարարել կոնկրետ կերպով այս կամ այն աշխատանքները կատարելու։

3. Աշակերտի տված՝ թեմային չվերաբերվող հարցերին պատասխանելով՝ ուսուցիչը շեղվում ե նպատակից, ուստի պետք ե դրանից խուսափել։ Եքսկուրսիայի ընթացքում աշակերտներին պետք ե սովորեցնել անհրաժեշտ նյութեր հավաքել և բերել դրպրոց՝ մշակելու համար։

ԵՔՍԿՈՒՐՍԻՈՆ ՄԵԹՈԴՆ ՈՒՆԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՄՈՄԵՆՏՆԵՐԸ

1. Նախապատրաստություն.
2. Եքսկուրսիա.
3. Եքսկուրսիայի ամփոփում.

1. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

ա) Ուսուցչի նախապատրաստական աշխատանքը.—այս մոմենտը կարևորագույն պայման ե եքսկուրսիան ճիշտ կազմակերպելու համար, ուստի եքսկուրսիայի պլանը կազմելիս դասատուն պարտավոր ե նախորդ ծանոթանալ այն օբյեկտին, որտեղ պետք ե կատարվի եքսկուրսիան։ Եթե եքսկուրսիայի տեղը բնությունն ե, որինակ՝ հողի շերտերի ուսումնասիրությունը,— այդ դեպքում դասատուն պետք ե, նախորդ ծանոթանա այն վայրին, որտեղ կատարվելու յե եքսկուրսիան, հատուկ ուշադրություն դարձնի նրա գեոլոգիական կողմի վրա, որպեսզի եքսկուրսիայի ժամանակ հարկ չլինի առանձին վորոնումներ կատարելու։ Պլանում պետք ե նշել եքսկուրսիայի նպատակը և այն հարցերը, որի վրա պետք ե աշակերտների ուշադրությունը հրավիրվի՝ հատուկ տեղ տալով եքսկուրսիայի սարքավորմանը։

բ) Դասարանի նախապատրաստումը եքսկուրսիային.—նախքան եքսկուրսիա գնալը՝ դասատուն դասարանում զրույցի միջոցով աշակերտներին ծանոթացնում ե եքսկուրսիայի նպատակի մասին, որպեսզի եքսկուրսիայի վայրում աշակերտներն արագ կողմնորոշվեն, նաև այն մասին, թե ինչպես հավաքել նյութեր և կազմել կոլեկցիաներ։ Դասատուն աշակերտներին հաղորդում ե նաև, թե ինչ եքսկուրսիոն հարմարություններ պետք ե ունենան—մատիտ, տետր, թուղթ, թղթից կամ կտորից պատրաստած պարկեր, բահ, դույլ և այլն (նայած եքսկուրսիայի պահանջին)։

2. ԵՔՍԿՈՒՐՍԻԱ

Եքսկուրսիայի ղեկավարման մեթոդական ձևերը կարող են լինել տարբեր։ Ցածր դասարաններում սովորաբար դասատուն զրույցի միջոցով բացատրում ե կատարվելիք աշխատանքների մասին՝ խուսափելով ձգձգվող բացատրություններից և ձգտելով առաջին պլանի վրա դնել յերեխաների աշխատանքները։ Ժամանակ առ ժամանակ դասատուն յերեխաներին տալիս ե կարճ առաջադրանքներ այս կամ այն հարցի վերաբերյալ։ Դասատուն հետևում ե, որ աշակերտներն եքսկուրսիայի ընթացքում հավաքեն միայն այն նյութերը, որոնք նախորդ հանձնարարված են, միաժամանակ նշելով հավաքած նյութերի անունը և տեսակը։ Այդ աշխատանքներն ավարտելուց հետո դասատուն կազմակերպում ե ընդհանրացնող կարճ զրույց, որի նպատակն ե պարզել՝ արդյոք եքսկուրսիան հասել իր նպատակին, թե ոչ, դրա համար առաջադրվում են մի շարք նախորդ մշակված հարցեր։

3. ԵՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Եքսկուրսիայից հետո, հետևյալ դասին, դասատուն զրույցի միջոցով ամփոփում ե եքսկուրսիայի արդյունքներն այն մասին, թե ինչ տեսան և իմացան եքսկուրսիայի ընթացքում, ցուցադրում ե հավաքած նյութերը և առանձին-առանձին թվում նրանց անունները։ Այնուհետև դասատուի ղեկավարությամբ աշակերտները կարգի յեն բերում եքսկուրսիայի ժամանակ հավաքած նյութերը, փակցնում են նրանց վրա ետիկետներ։ Նրկարչական աշխատանքին ավելի ընդունակ աշակերտները նկարներ են նկարում եքսկուրսիայի նյութերի վերաբերյալ։ Հետաքրքիր աշխատանք ե ներկայացնում նաև մակերևույթների և կոլեկցիաների պատրաստումը։

«Ազգային գրադարան
NL0230016
БІБЛІОТЕКА
Академії Наук
УРСР

10 Коп
45. 987
15031

Ուշադրություն.—5-րդ եջի նախավերջին տողում «մակերեսների» բառը կարդալ «մակեռանների»։

Խմբագիր՝ Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Սրբագրիչ՝ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ
Գլավլիտի լիազոր՝ Բ—1100, հրատ. № 8
Պատվեր № 27, տիրաժ 1000

Լուսնբաթի տպարան. *Երևան, Տերյան № 127*

Հայ գրքի